

13 Իսկ Ծիծառնիկն<sup>1</sup> զկինն եւ զորդիսն եւ զազգատոհմն<sup>2</sup> իւր յղեաց<sup>3</sup> առ իշխանն Արջուց, եւ ինքն եկեալ՝ ծանոյց զիրսն եկեղեցապանին<sup>4</sup>: 14 Եւ Նորա յանձին կալեալ<sup>5</sup> իջոյց ի պահարանէն, եւ գնացեալ<sup>6</sup> զհետ<sup>7</sup> Նորա յերկիր<sup>8</sup> իշխանին՝ ընտրեաց<sup>9</sup> տեղի եւ եւ շինեաց<sup>10</sup> եկեղեցի: 15 Եւ անդ եղին զտերունական սուրբ նշանն<sup>11</sup>. Եւ անուանեաց զաւանն<sup>12</sup> Ծիծառնէ<sup>13</sup>:

16 Եւ ընդ այն ժամանակս<sup>14</sup> Ներսէս Հայոց կաթողիկոս, որ ի Տայոց էր ծննդեամբ, այն, որ զՎաղաշկերտոյ<sup>15</sup> Սուրբ Աստուածածինն շինեաց, եկն վասն Սուրբ խաչին տեսութեան: 17 Իսկ Վահանայ առեալ զկաթողիկոսն՝ եկն ի վանսն Գլակայ: 18 Եւ խնդրեաց զՍուրբ խաչն<sup>16</sup>. Իսկ սպասաւորացն խնդիր արարեալ՝ ոչ գտին: 19 Սուգ<sup>17</sup> առին իշխանքն եւ կաթողիկոսն եւ եպիսկոպոսունքն<sup>18</sup>: 20 Եւ զեւթն<sup>19</sup> ար Վահան ոչ եկեր եւ ոչ արք<sup>20</sup>: 21 Եւ յայտնեալ նմա<sup>21</sup> մինչդեռ ննջեր ի դուռն<sup>22</sup> եկեղեցոյն, յաւուր ուրբաթու, ետես<sup>23</sup> ինքն իշխանն Վահան, զի այր ոմն լուսաւոր ընդ սեամս եկեղեցոյն<sup>24</sup> յայս կոյս ելեալ՝ ասէ<sup>25</sup> ցնա<sup>26</sup>. «Չիս կողոպտեցին եւ զԱրջք շինեցին: 22 Արդ՝ թո՛յլ տուր, զի երկիրն այն ամուր է. ոչ կարեն անդի<sup>27</sup> գողանալ»: 23 Իսկ Նորա<sup>28</sup> լի եղեալ խնդութեամբ՝ զարթեալ<sup>29</sup>, եւ ընթացեալ՝ աւետիս տայր կաթողիկոսին, եթէ<sup>30</sup> խաչն յԱրջք<sup>31</sup> է<sup>32</sup>:

- 
- 1 *m* Ծիծեռնիկն / *t* Ծիծառնիկ
  - 2 *b* զազգատոհմն / *m* զորդիս *ի/ս* զորդիսն եւ զազգատոհմն
  - 3 *b* յղարկեաց, *m* յուղարկեաց, *n* արձակեաց *ի/ս* յղեաց (*sv*)
  - 4 *b* *sv* եկեղեցապանին
  - 5 *m* մտեալ *ի/ս* յանձին կալեալ
  - 6 *t* գնաց
  - 7 *m* առեալ գնաց զկնի *ի/ս* գնացեալ զհետ
  - 8 *t* յերկիրն / *m* եւ գնացին յերկիրն *ի/ս* յերկիր
  - 9 *m* եւ խնդրեցին, *b* ընդրեաց *ի/ս* ընտրեաց (*stv*)
  - 10 *m* մի ամուր եւ շինեցին *ի/ս* եւ շինեաց
  - 11 *m* եղին զտերունական խաչն ի նմա *ի/ս* անդ եղին ... նշանն
  - 12 *m* զգեղն, *n* զանուն տեղոյն *ի/ս* զաւանն (*bsv*)
  - 13 *s* Ծիծառն, *b* *tv* Ծիծառն *ի/ս* Ծիծառնէ (*n*) / *m* Ծիծառնէ յանուն իւր
  - 14 *sv* ժամանակս *ի/ս* ժամանակսն (*bnt*)
  - 15 *b* Վաղաշկերտոյ
  - 16 *m* *չիք* Եւ ընդ այն ... խաչն (*7 տող*)
  - 17 *m* ազդ արարին իշխանին Վահանայ եւ սուգ
  - 18 *m* ամենայն իշխանքն *ի/ս* իշխանքն ... եպիսկոպոսունքն
  - 19 *t* Ե *ի/ս* զեւթն
  - 20 *stv* եարբ *ի/ս* արբ (*bnq*) / *m* Վահան, ոչ կերան, ոչ արբին *ի/ս* զեւթն արբ ... արբ
  - 21 *m* մինչեւ իւր իսկ յայտնեցաւ *ի/ս* Եւ յայտնեալ նմա
  - 22 *stv* դրունս *ի/ս* դուռն (*bmng*)
  - 23 *t* Ես *ի/ս* ետես
  - 24 *bqt* եկեղեցոյն
  - 25 *b* ասեր *ի/ս* ասէ (*stv*) *nq* եւ ասէ
  - 26 *m* եկն եկաց առ նմա այր մի լուսազետ եւ ասէ *ի/ս* ետես ինքն ... ասէ ցնա (*3 տող*)
  - 27 *sv* անտի *ի/ս* անդի (*blt*) *nq* *չիք* անդի / *m* եւ անդի ոչ կարեն *ի/ս* ոչ կարեն անտի
  - 28 *v* Վահանայ *ի/ս* Նորա
  - 29 *m* զարթուցեալ լի եղեւ խնդութեամբ *ի/ս* լի եղեալ ... զարթեալ
  - 30 *nqb* թէ *ի/ս* եթէ (*mstv*)
  - 31 *sv* ի յԱրջքն *ի/ս* յԱրջք (*blng*)
  - 32 *m* յԱրջք է խաչն *ի/ս* խաչն յԱրջք է